

**Հայաստանի Հանրապետության  
սահմանադրական դատարանին**

**Դիմող՝**

**Արթուր Ալբերտի Սաքունց  
Անձնագիր՝ AN 0460612, տրված 05.10.2011 թ. 018-ի կողմից  
Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Գրիգոր Լուսավորիչի 21/23**

**Դիմում**

(ՀՀ ընտրական օրենսգրքի 57-րդ, 90-րդ, 124-րդ և 164-րդ հոդվածները, այնքանով, որքանով  
բացառում է քվեաթերթիկում «Բոլորին դեմ եմ» տողի առկայությունը և քվեարկելու  
հնարավորությունը, ՀՀ Սահմանադրության 4-րդ, 30-րդ հոդվածներին հակասող և անվավեր  
ճանաչելու վերաբերյալ)

**1. Գործի դատավարական նախապատմությունը և փաստերը.**

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից 11.08.2011 թվականին  
ընդունվել է թիվ 56-Ն որոշումը, որում չի նախատեսվել «Բոլորին դեմ եմ» տող:

2012 թվականի ապրիլի 28-ին դիմել եմ ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ  
կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից 2011 թվականի օգոստոսի 11-ին  
ընդունված թիվ 56-Ն որոշումը, այնքանով, որքանով բացառում է «Բոլորին դեմ եմ»  
տողի ներառումը քվեաթերթիկում և քվեարկելու հնարավորությունը, օրենքին հակասող  
և անվավեր ճանաչելու պահանջով:

Նույն օրը ՀՀ վարչական դատարանը գործը ընդունել է վարույթ:

2012 թվականի մայիսի 4-ին դատարանը կայացրել է վճիռ, որով մերժել է իմ  
կողմից ներկայացված հայցադիմումը՝ մերժման հիմքում դնելով (կիրառելով) ՀՀ  
ընտրական օրենսգրքի 57-րդ, 90-րդ, 124-րդ և 164-րդ հոդվածները:

Վարչական դատարանի վճիռն օրինական ուժի մեջ է մտել 2012 թվականի  
մայիսի 4-ին և այն բողոքարկման ենթակա չէ:

**2. ՀՀ վարչական դատարանի կողմից իմ նկատմամբ կիրառված սույն  
դիմումով վիճարկվող նորմերը.**

ՀՀ վարչական դատարան է ներկայացվել ՀՀ վարչական դատավարության  
օրենսգրքով նախատեսված՝ ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ  
հայց, որով ես վիճարկել եմ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից  
11.08.2011 թ. ընդունված թիվ 56-Ն որոշումը՝ պատճառաբանելով, որ վիճարկվող  
նորմատիվ ակտով խախտվել է ՀՀ Սահմանադրության 4-րդ և 5-րդ հոդվածներով ինձ  
վերապահված՝ ընտրություններին մասնակցելու, ընտրական իրավունքը ազատ  
կամահայտնությամբ իրացնելու իրավունքը և խնդրել եմ վիճարկվող նորմատիվ ակտը  
մասնակի ճանաչել օրենքին հակասող և անվավեր:

ՀՀ վարչական դատարանը կիրառել է ընտրական օրենսգրքի 49-րդ, 57-րդ, 90-րդ, 124-րդ և 164-րդ հոդվածները, որոնցով մասնավորապես սահմանվում է, որ քվեաթերթիկի հատման գծից վերև՝ ելունդի վրա, նշվում է քվեաթերթիկի հերթական համարը: Թեկնածուների ազգանունը, անունը, հայրանունը, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) անվանումները քվեաթերթիկում նշվում են հատման գծից ներքև՝ ձախ կողմում, այբբենական հերթականությամբ, իսկ աջ կողմում նախատեսվում են դատարկ քառանկյուններ՝ քվեարկողի կողմից նշում կատարելու համար: Սահմանվում է, որ մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում քվեաթերթիկում թեկնածուի ազգանվան տողի ներքևում նշվում են «կողմ եմ» և «դեմ եմ» բառերը՝ յուրաքանչյուրի դիմաց աջ կողմում՝ նշումի համար նախատեսված դատարկ քառանկյունով:

### 3. Դիմումի իրավական հիմքերը, և փաստարկները.

Բարձր Դատարան

ՀՀ վարչական դատարանը իմ կողմից ներկայացված հայցի մերժման հիմքում դրել է (կիրառել է) ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ, 57-րդ, 90-րդ, 124-րդ և 164-րդ հոդվածների դրույթները: Իմ սահմանադրական իրավունքի պաշտպանության նկատառումներով ներկայացնում եմ վիճարկվող նորմերի հակասահմանադրականության հետևյալ թեզերը և հիմնավորումները.

3.1. ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածով սահմանվում է, որ Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

Սահմանադրության 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք:

Վերոգրյալ սահմանադրական նորմերում ամրագրված են սկզբունքներ, որոնք ուղղված են միասնական հավասարակշռված, ներքին հակասություններից զերծ ընտրական համակարգի ձևավորումը խթանելուն, որը կերաշխավորի ընտրովի մարմինների գործունեության կայունությունն ու հաջորդականությունը:

ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածի բովանդակության մեկնաբանությանն են անդրադարձել «ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ» հրատարակության հեղինակները (Տե՛ս «Սահմանադրության մեկնաբանություններ», Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան. «Իրավունք» 2010)՝

*«...Հավասարության սկզբունքն ընտրական իրավունքի և հանրաքվեին մասնակցելու իրավունքի հիմքերից մեկն է: Ժողովրդավարության հրամայական պահանջներից մեկը բոլոր քաղաքացիների քաղաքական հավասարությունն է՝ «մեկ մարդ՝ մեկ ձայն» սկզբունքով: Դա նշանակում է, որ բոլոր քաղաքացիներն*

ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով, և յուրաքանչյուր ընտրողի ձայնն ունի նույն կշիռը: Այս սկզբունքը բխում է հիմնարար միջազգային իրավական փաստաթղթերից և ուղղակիորեն փոխկապակցված է ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածում ամրագրված հավասարության սկզբունքի հետ:

Ընտրական և հանրաքվեին մասնակցելու իրավունքի հավասարության սկզբունքը բովանդակում է առնվազն հետևյալ նախապայմանները.

• յուրաքանչյուր ընտրող պետք է ունենա մյուս ընտրողների հետ հավասար ձայն (ձայներ),

• նրա ձայնը (ձայները) պետք է ունենա նույն ազդեցությունը, ինչպես և մյուս ընտրողների ձայները,

• (.....)

• ընտրական բոլոր փուլերում ընտրական և հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացման համար ընտրական հարաբերությունների սուբյեկտների համար պետք է սահմանված լինեն հավասար պայմաններ (.....)

• Ընտրական իրավունքի և հանրաքվեին մասնակցելու իրավունքի հավասարության սկզբունքն արտահայտվում է հանրաքվեին և ընտրություններին հավասար հիմունքներով մասնակցելու հասկացության մեջ (.....):

Ուղղակի ընտրական իրավունքի սկզբունքը ենթադրում է, որ ընտրությունների ժամանակ քաղաքացիները քվեարկում են անմիջականորեն՝ թեկնածուին և (կամ) թեկնածուների ցուցակներին կողմ կամ թեկնածուին, թեկնածուներին և (կամ) թեկնածուների ցուցակներին դեմ:

Այս սկզբունքի ամրագրումը հնարավորություն է տալիս առավել ստույգ, ճիշտ, լիարժեք և ժողովրդավարական եղանակով արտահայտել ժողովրդի կամքն ընտրությունների, հանրաքվեի ժամանակ, ինչպես նաև սահմանել ուղղակի կապ ընտրողների և նրանց շահերը ներկայացուցչական մարմիններում ներկայացնողների հետ (.....):»:

Վերոգրյալից ակնհայտորեն հետևում է, որ ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածը նախատեսել է բոլոր ընտրողների համար ընտրություններին հավասար հիմունքներով մասնակցելու հնարավորություն: Սակայն վիճարկվող նորմերի առկայությունը խոչընդոտում է ընտրություններին մասնակցել այն ընտրազանգվածին՝ մասնավորապես ինձ, որը դեմ է առաջադրված բոլոր թեկնածուներին:

Վիճարկվող նորմերի առկայության պայմաններում վերը վկայակոչված ընտրազանգվածը ուղղակի կորցնում է իր ընտրական իրավունքը, քանի որ հնարավորություն չունի դեմ արտահայտելու բոլոր թեկնածուներին, նրան ուղղակի մնում է քվեաթերթիկի վրա խաչ քաշելու միջոցով արտահայտել իր կամքը, որը հետագայում անվավեր է ճանաչվում և որով խախտվում է ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածով ամրագրված հավասարության և ուղղակի ընտրության սկզբունքները:

Ավելին՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 3-րդ և 5-րդ հոդվածները հետևողականորեն ամրագրել են ՀՀ Սահմանադրության 4-րդ և 30-րդ հոդվածներով երաշխավորված սկզբունքները, որոնց մեկնաբանությունից հետևում է, որ պետությունը չպետք է ստեղծի այնպիսի իրավիճակ, որտեղ ընտրության ժամանակ կապահովվի ընտրողների միայն այն գանգվածի ընտրական իրավունքը, որը կողմ է այս կամ այն կուսակցությանը կամ թեկնածուին և խոչընդոտի այն ընտրագանգվածի իրավունքի իրացմանը, որը դեմ է առաջադրված թեկնածուներից կամ կուսակցություններից բոլորին:

Վիճարկվող նորմում նման հնարավորություն է նախատեսվել միայն այն դեպքում, երբ առաջադրվում է միայն մեկ թեկնածու, այս դեպքում սահմանվել է «Կողմ եմ» կամ «Դեմ եմ» ընտրության հնարավորությունը և դրանով ապահովվել է ընտրական իրավունքի լիարժեք իրականացումը:

*Փաստորեն, այսօր Հայաստանի Հանրապետությունում ստեղծվել է այնպիսի իրավիճակ, որտեղ ես և իմ կարգավիճակում հայտնված մյուս քաղաքացիները չենք կարողանում լիարժեք իրացնել մեր ընտրության իրավունքը. եթե ես չեմ ցանկանում ընտրել առաջադրված բոլոր կուսակցություններից /դաշինքներից/ կամ թեկնածուներից որևէ մեկին, ապա այս դեպքում ես կորցնում եմ իմ կամքն ազատ արտահայտելու և իշխանության ձևավորման գործընթացին մասնակցելու իրավունքը և հնարավորությունը:*

3.2. Այսպիսով, ԿԸՀ-ը, իր որոշմամբ չկարգավորելով և քվեաթերթիկներում չսահմանելով «Բոլորին դեմ եմ» տող, անհարկի սահմանափակել է բոլոր այն ընտրողների ընտրական իրավունքը, որոնք ցանկանում են ընտրություններին մասնակցող բոլոր թեկնածուներին դեմ քվեարկել՝ այդպիսով արտահայտելով իրենց կամքը երկրի կառավարմանը մասնակցելու համար իր թեկնածությունը առաջադրած թեկնածուի վերաբերյալ:

«Բոլորին դեմ եմ» կամ «Տարբերակներից ոչ մեկը» իրավական ինստիտուտը կիրառվում է որոշ երկրներում կամ կառույցներում և ընտրողին հնարավորություն է տալիս արտահայտելու իր բացասական վերաբերմունքը բոլոր թեկնածուների նկատմամբ: Այն հիմնվում է այն սկզբունքի վրա, որ հավանությունը արտահայտելու հնարավորության դեպքում պետք է տրվի նաև այդ հավանությունը ետ պահելու մեխանիզմը, ճիշտ այնպես, ինչպես «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով է սահմանված քվեաթերթիկում առկա հարցին «ոչ» պատասխանելու հնարավորությունը:

«Բոլորին դեմ եմ» տարբերակը գոյություն ունի Հունաստանում (սպիտակ), ԱՄՆ-ի Նևադա նահանգում (թեկնածուներից ոչ մեկը), Այովայի կուսակցական ընտրություններում (ոչ մի նախապատվություն), Ուկրաինայում (բոլորին դեմ), Իսպանիայում (դատարկ քվե), Կոլումբիայում (դատարկ քվե) և Բանգլադեշում (ոչ մի ձայն): Մինչև 2006 թվականը նման տարբերակ գործել է նաև Ռուսաստանի Դաշնությունում:

1985 թվականի հունիսի 19-ի թիվ 5 օրենքի համաձայն՝ Իսպանիայի ընդհանուր ընտրական համակարգի 96-րդ հոդվածի 5-րդ կետով «քվեն համարվում է դատարկ, բայց վավեր, եթե ծրարի մեջ քվեաթերթիկ չկա կամ քվեաթերթիկը լրացված չէ»: Թեկնածուն համարվում է ընտրված, եթե նրա ձայները գերազանցում են դատարկ քվեները:

Բանգլադեշում «ոչ մի ձայն» տարբերակն առաջադրվել և ընդունվել է 2008 թվականին, որպես Մարդկանց հրամանի ներկայացման որոշման (ՄՀՆ) փոփոխություն: Ըստ այս փոփոխության, ընտրություններն անվավեր են ճանաչվում, եթե բոլորին դեմ է քվեարկել ընտրողների 50%-ը կամ ավելին:

Կոլումբիայում «դատարկ քվեի» հնարավորությունն ամրագրված է Սահմանադրության 258-րդ հոդվածով, որտեղ դատարկ քվեների բացարձակ մեծամասնության դեպքում քվեարկությունը պետք է կրկնվի: 2009 թվականին իրականացված քաղաքական բարեփոխումներն էլ ավելի ընդլայնեցին դատարկ քվեի իրավասության սահմանները: Ներկայումս եթե նույնիսկ դատարկ քվեները ձայների մեծամասնությունն են հավաքում, այլ ոչ բացարձակ մեծամասնությունը, քվեարկությունը պետք է կրկնվի:

Առաջարկվող տարբերակը, բացի ընտրական իրավունքի պաշտպանությունից նաև հնարավորություն կտա ազատվելու «պարտադիր նշանակման» ընտրություններից, երբ ընտրողները հաճախ ստիպված են քվեարկել «չարյաց փոքրագույնի» օգտին: Այսինքն՝ ընտրողները պետք է հնարավորություն ունենան քվեարկելով «բոլորին դեմ»՝ պաշտոնը թողնել թափուր կամ պահանջել նոր ընտրություններ՝ այլ թեկնածուներով:

Կրկնակի ընտրության անցկացումը շատ ավելի քիչ ծախսատար է, քան անարժան թեկնածուի ընտրելը: Մեր իրականության մեջ սա ավելի քան ակհայտ է, անարժան թեկնածուի պատճառած վնասները՝ վատնած աշխատանքն ու հարկատուների ռեսուրսները, անհամեմատելի են այն չնչին ծախսերի հետ, որ կպահանջի կրկնակի ընտրության կազմակերպումը:

Թեկնածուն պետք է ստանա ընտրողների համաձայնությունը, նույնիսկ եթե նա մրցակից չունի: Այսինքն՝ ընտրողները պետք է հնարավորություն ունենան քվեարկելու թեկնածուի դեմ, պետք է ունենան այլ տարբերակ ընտրելու հնարավորություն:

Առաջարկվող տարբերակը, բացի ընտրական իրավունքի պաշտպանությունից նաև հնարավորություն կտա ընտրություններին իմաստավոր մասնակցություն ունենալ բոլոր այն ընտրողներին, որոնք իրենց բացասական վերաբերմունքն արտահայտում են պարզապես ընտրություններին չմասնակցելով:

Հարցումները ցույց են տալիս, որ չքվեարկելու հիմնական պատճառներից է թեկնածուներից ոչ մեկին հավանություն չտալը, այդ պատճառով «բոլորին դեմ»-ը հնարավորություն կտար բոլորին արտահայտելու իրենց դիրքորոշումը և իրացնելու իրենց ընտրական իրավունքը:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով և հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 27, 28, 68, 69 հոդվածները՝

## ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 4-րդ, 30-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել 2011 թվականի մայիսի 26-ին ընդունված ընտրական օրենսգրքի 57-րդ, 90-րդ, 124-րդ և 164-րդ հոդվածները (այնքանով, որքանով չեն նախատեսում քվեաթերթիկում «Բոլորին դեմ եմ» տողի առկայությունը):


### 5. Կից ներկայացնում եմ՝

1. պետական տուրքի վճարման անդորրագրի բնօրինակը,
2. անձնագրիս պատճենը,
3. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ 11.08.2011 թ. թիվ 56-Ն որոշման պատճենը,
4. ՀՀ ընտրական օրենսգրքի վիճարկվող նորմերի պատճենները,
5. ՀՀ վարչական դատարանի 04.05.2012 թ. վճռի պատճենը:

Դիմող՝

*Ն.Առաքելյան*

Արթուր Սարգսյան



*Արթուր Սարգսյան* 2012 թ.